




ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ
ՔԱՐՈԶԸ ՍԱՄԱՐՂԱՆԴԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ
(20 օգոստոսի 1995 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Տեղափոխեալ զքեզ ի վերնական ի կառս, քերովքեականս Աստուածամայր, սպասատրեալդ ի սերովքեից և երկրպագեալդ յանմարմնական զօրաց» (Ծարական):

«Տեղափոխելով քեզ քերովքեական վերնական կառույցները, ով Աստվածամայր, քե՛զ եմ սպասարկում սերովքեները և քեզ երկրպագում անմարմինների զորքերը»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Ծնորհակալ եմ բարձրյալն Աստծուց, որ այսօր իմ ռոքերն առաջնորդեց դեպի Սամարղանդի հայոց նորակառույց այս շքեղ եկեղեցին, որպէսզի իմ տկար ձեռքերով և աղոթքով կատարեի նախկատիքը երեկ երեկոյան, իսկ այս առավոտյան էլ՝ օծումը Ս. Աստվածածին եկեղեցու:

Փառք Աստծուն, որ բոլորիս արժանացրեց մասնակցելու այս փառավոր հանդիսութեանը, որն իր տեսակի մեջ բացառիկ է:

Ահաւասիկ այսօր Կենտրոնական Ասիայում, Սամարղանդ քաղաքում, Ուզբեկստանի հայկական առաջին եկեղեցին ենք բացում: Սա սովորական երևույթ չէ մեզ համար, այլ հատուկ ու քաջալերական: Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումն ու բացումը մեկ անգամ ևս գալիս են հաստատելու և ամրացնելու մեր վաղեմի կապերը ուզբեկ ժողովրդի հետ: Հավանաբար այս է պատճառը, որ Հայաստանից պատկառելի մի ներկայացուցչական խմբով եկել ենք Սամարղանդ՝ այս օրը փառաբանելու, հանդեսներով փառավորելու և այն նշելու մեր կյանքի տարեգրութեան մեջ:

Այս առթիվ, հանուն Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի և Հայաստանյալց Եկեղեցու ողջ նվիրապետութեան, մեր երախտագիտութեանն ենք հայտնում Ուզբեկստանի վսեմաշուք նախագահ Քարիմովին և երկրի ղեկավարութեանը, որոնք հնարավոր դարձրին 1993

Հիսուսի Համբարձումից հետո, ըստ առաքելական ավանդության, Ա. Կույսն ապրեց Հիսուսի աշակերտներից Ա. Հովհաննեսի խնամքի տակ ևս 15 տարի, իր շրջապատում դարձավ սիրո և գուրգուրանքի առարկա:

Երբ հասավ ժամը, Աստվածամայրը փակեց աչքերը՝ փոխադրվելու համար այս աշխարհի կյանքից մի նոր կյանք: Հիսուսի աշակերտները փառքով ու պատվով թաղեցին նրան Գեթսեմանիի ձորակում գտնվող ընտանեկան վիմափոր գերեզմանում: Ավանդությունն ասում է, որ Տիրամոր գերեզմանի վրա երեք օր ու երեք գիշեր լավել են հրեշտակների քաղցրաձայն երգեր: Հիսուսի աշակերտներից Ա. Բարթողիմեոսը, որը հետո դարձավ Հայաստանի լուսավորիչ և նահատակ առաքյալը, Աստվածամոր թաղման ժամանակ հեռու մի վայրում էր գտնվում: Երբ ճանապարհորդությունից նա Երուսաղեմ վերադարձավ՝ շատ նվիրված լինելով Տիրամորը, ցանկացավ անպայման այցելել Գեթսեմանի ու տեսնել նրա դեմքը վերջին անգամ: Բարթողիմեոսի ցանկությանը ընդառաջելով, եղբայրները նրա հետ գնացին դեպի գերեզման և զարմանքով տեսան, որ Տիրամոր մարմինը դամբարանում չէր: Տիրամայրը մարմնով փոխադրվել էր երկինք:

Աստվածամոր մահը եկեղեցին կոչում է ննջում, որովհետև նա իր անապական մարմնով փոխադրվեց երկինք՝ իր Որդու աստվածային փառքի մեջ ապրելու: Եվ որպես համայն մարդկության գուրգուրող և հոգատար մայրը, նա դառնալու էր բարեխոս տեսալես մեր մեղքերի քավության համար: Մեր Եկեղեցին Աստվածածնի այս տոնը կոչել է «Տօն Վերափոխման Սուրբ Կույսի», և իրավամբ այս տոնը Հայ Եկեղեցու հինգ գլխավոր տաղավարներից մեկն է համարվում:

Սրտագինա շնորհավորում եմ հայ և ուզբեկ ժողովուրդներին, հատկապես կանանց, այսօրվա շնորհաբաշխության՝ Ա. Աստվածածին եկեղեցու օծման առթիվ: Թող Ա. Մեռոնի հեղումով այս եկեղեցու խորանում օրհնվեն մեր երկու եղբայրացած ժողովուրդների զավակները, և սերն ու խաղաղությունը տիրեն մեր երկրների վրա:

Սամարղանդում մեր առաջին ա. պատարագի այս արբազան պահին, երբ Ա. Կույսի վերափոխման հիշատակով ևս մեր իմացական և հոգեկան աշխարհը հոգևոր խնդությամբ ենք լցնում և վեր հանում ու պանծացնում ճշմարիտ կնոջ, մոր, քրոջ կերպարը, ես շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում, որ ձեր ուսերի վրա դրված ծառայության և եկեղեցասիրության լուծը համբերությամբ տանեք, և ձեզանով մենք ապագայում ուրախանանք:

Եղեք գիտակից ձեր արբազան դերին և պարտականությանը, եղեք դաստիարակ նոր սերնդին՝ ամուր պահելով հայ մշակույթը, պատմությունն ու ավանդությունը, նաև պաճառ պահեցեք ձեր Ա. Եկեղեցին և սիրով լեցուն ձեր աստվածասեր ընտանիքները:

«Ով երկնավոր թագավոր, անասան պահիր քո Եկեղեցին և քո անվան երկրպագուներին՝ պահի՛ր խաղաղության մեջ», ամեն: